ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 03.10.2017թ. հ.Ե-1/93 գրության՝ Երևանի ենթակայության մանկապարտեզների ֆինանսավորման հիմքում դրվող երեխաների թվի հաշվարկի մեթոդաբանության ու ֆինանսավորման կարգի վերաբերյալ, տեղեկացնում ենք, Երևանի ենթակայության մանկապարտեզներում կրթությունն իրականացվում է անվճար՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին: Մանկապարտեզներին յուրաքանչյուր ամիս հատկացվում է ֆինանսավորում 650.0 հազ. դրամի չափով՝ հաստատուն պահպանման ծախսերի համար, ինչպես նաև մեկ երեխայի հաշվով 22.5 հազ. դրամ՝ երևանաբնակ կամ արտոնություն ունեցող (ցանկը սահմանված է Երևանի քաղաքապետի 04.03.2016թ. հ.706-Ա որոշման 1-ին կետի 1) ենթակետով) ծնողների դեպքում: Հիշյալ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում չներառված ծնողների երեխաների դեպքում մեկ երեխայի հաշվով հատկացվում է 14.5 հազ. դրամ, քանի որ 8.0 հազ. դրամ վճարումն իրականացվում է ծնողի կողմից: Ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզներին մեկ երեխայի հաշվով լրացուցիչ հատկացվում է ամսական 5.0 հազ.դրամ: Երեխա-թվի ֆինանսավորումն իրականացվում է երեխաների միջին ամսական փաստացի հաճախումների հիման վրա, իսկ մեկ երեխա-թվի ֆինանսավորման հաշվարկման հիմքում դրվել է երեխա-թվով պայմանավորված փոփոխական ծախսերի միջինացված գումարը: Հաստատուն և փոփոխական միջինացված ծախսերի գումարների հաշվարկման հիմքում ընդունվել են տարբեր խմբերի քանակ ունեցող մանկապարտեզների փաստացի ծախսերը: Ընդ որում, որպես հաստատուն ծախսեր, ընդունվել են հիմնականում վարչասպասարկող անձնակազմի աշխատավարձերը, կոմունալ ծախսերը, ինչպես նաև պահպանման այլ ընթացիկ ծախսերը (տնտեսական, գրասենյակային, ընթացիկ վերանորոգման և այլն), իսկ փոփոխական ծախսերի հիմքում ընդունվել են մանկավարժական և երեխաների խնամքի հետ կապված անձնակազմի աշխատավարձը ու երեխաների սննդի գծով ծախսը: Նվազագույն աշխատավարձի և կոմունալ ծախսերի սակագների աճով պայմանավորված իրականացվել է գների ինդեքսավորում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ